**Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 1-ին դասարանի դասվարի /19 դասաժամ/, 2-րդ դասարանի դասվարի /20 դասաժամ/, ֆիզկուլտուրա /14 դասաժամ/, երաժշտություն /1 դասաժամ/, կերպարվեստ (արվեստ) /4 դասաժամ/, տեխնոլոգիա/2 դասաժամ, հասարակագիտություն /3 դասաժամ/, կենսաբանություն /6 դասաժամ/, ռուսաց լեզու /14 դասաժամ/, զինղեկ /0.5 դրույք+ ՆԶՊ /2 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն ացկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում /ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/:
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
Տնօրենի կողմից նշանակած պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջությամբ չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00 -ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցութը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 12-ին ՝ժամը 14:00-ին** Տավուշի մարզի Կիրանցի Գ.Վարդանյանի անվան հիմնական դպրոցում:
Հասցեն Տավուշի մարզ գ.Կիրանց փ1 շենք 22:
Տեղեկությունների համար զանգահարել 094979494 հեռախոսահամարով: